№ 166 Սեպտեմբերի 5 (17) 1881 Սեպտեմբերի 5 (17) № 166

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ. կես տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպեկով։

Թիֆլիսում զրվում են միմիայն խմբագրատան մեջ.

Առաքագրագրերը գրվում են ազդրակի
Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար, վճարում են
հրատարակիչը բառին 2 կոպեկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոն։ Նամակ Գօրուց։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—«Հայրենիք» աբրագրի յայտարարը։ Ազգաւոր Ֆրանսիա։ Բուլգարիա։ Ամերիկա։ Յունաստան։ Նամակ Գերմանիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Ամիս 3-ին Թիֆլիսի Ամարային Թատրոնում տրվեցաւ Հայոց առաջին ներկայացումն, որով սկսվեց այս տարուայ շրջանը։ Կատերին Հօվարդի դերը „Հենրիկ VII“ Դիմակի պիէսայի մէջ կատարեց առաջին անգամ դերասանուհի Հրաչեայ։ Սա հրաւիրված է գրամատիկական դերերի համար, ուրեմն օր. Աստղիկի ամպուսյի համար։ Թէև առաջին անգամից գժուար է որոշ եզրակացութեան հասնել այս հրաշակաւոր դերասանուհու ընդունակութիւնների մասին, բայց գարձեալ կարելի է ասել, որ նա աչքի է ընկնում իր ձեռնամիկներով։ Սրա գլխաւոր պակասութիւնը ձայնն է, եթէ միայն սինիոջ այդ պակասութիւնը ժամանակաւոր չէ։ Ասում են, իբր թէ պատուելի դերասանուհին մրսելուց է կորցրել իր ձայնը։ Այս անգամ մենք կը բաւականանք մի նկատողութիւնով պատուելի սինիոջը. իզուր է աշխատում ա. Հրաչեան, որքան կարելի է, երկար ճեպ ա վ ա ն ա ց է Ն ա յ ի վրա։ Ավանսցենայի վրա խաղալը թէև շատ է օգնում է Ֆ Ֆ է կ ա ն ե ր ի ն, բայց դա մի այնպիսի պակասութիւն է առաջնակարգ դերասանուհու համար, որից, մեր կարծիքով, հարկաւոր է հրաժարվել։

Պ. Ադամեան արդէն վաղուց սիրելի է դարձել մեր հասարակութեան և սովորդ է նկատել, որ երբ Ադամեան բեմի վրա է, ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը զրավում է նրանով, բայց ափսոս որ պ. Ադամեանը ըստ իր սովորութեան շատ շուտ շուտ է կխտում իր յօնքերը և անդորմ կերպով թափ է տալիս իր մազերը։

Պ. Մնակեանը Հենրիխի դերում աշխատում էր կոմիկ չերևալ և չը փչացնել իր դերը և այդ դրան բաւական յաջողվեց։ Ներկայացումն ընդհանրապէս յաջող էր, բայց ի՞նչ օգուտ այդ տեսակ յաջող ներկայացումներից։ Միշտ թոյն և թոյն...։ „Մշակը“ շատ է խօսացել այդ թունաւոր ներկայացումների մասին, որոնք թունաւորում են Թիֆլիսի հասարակութեան թէ գրականները և թէ նրանց բարոյականութիւնը։

***

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

Օգոստոսի 31-ին

Բաղդաւոր է այն քաղաքը, որտեղ լինում են թատրոնական ներկայացումներ, դրականական երեկոներ, դասախօսութիւններ և այլն. անբաղդ է այն քաղաքը, որտեղ սրանցից ոչ մէնը չէ լինում։ Գօրին պատկանում է այս վերջին քաղաքներին։ Այստեղ ամենևին չեն լինում ոչ դրականական երեկոներ և ոչ դասախօսութիւններ, միայն երբեմն երբեմն լինում են թատրոնական ներկայացումներ վրացերէն լեզուով, իսկ հայերէն լեզուով ներկայացումներ ամենևին չեն եղել (գնէ՛ ես չեմ յիշում.). որովհետև չը կան այստեղ ազնիվներ, որոնք կարողանային ներկայացնել այդ լեզուով։

Ամսոյս 27-ին մեր քաղաքը բաղդ ունեցաւ տեսնել հայերէն ներկայացումն Հնորիս պ. պ. Գր. Խիթարեանցի, Յ. Ամիրաղեանցի և Մ. Բաղդասարեանցի։ Ներկայացրին «Վալալ Ղազո» և «Երկու քաղցածներ» վոդեվիլները։ Ի հարկէ այստեղ դեռ վաղ է դրամաներ ներկայացնել, պէտք է այնպիսի պիէսաներ ընտրել, որոնք փոքր ի շատ հասկանալի են հասարակութեան։ Պէտք է ասած որ ներկայացումն չատ լաւ անցաւ և հանդիսականներն էլ գոհ մնացին՝ չը նայելով որ նրանցից մի քանիսները հայերէն չէին հասկանում։ Շատ լաւ ներկայացրին իրանց դերերը «Վալալ Ղազոյ» մէջ—Ղազոյ դերը պ. Յ. Ամիրաղեանց, Սիմոնասի դերը օր. Հռիփսիմէ Զաքարեանց, Պիվիվիի դերը պ. Մ. Բաղդասարեանց, Յովհաննէս Գարաչիչագեանի դերը պ. Գր. Խիթարեանց և Յէվիսաձէի դերը պ. Ա. Արշակունի։ «Երկու քաղցածների» մէջ—Կակուլու դերը պ. Ա Արշակունի, պոլսեցու դերը պ. Մ. Բաղդասարեանց, Գանտէի դերը պ. Գր. Խիթարեանց և Ֆրանսուայի դերը պ. Յ. Ամիրաղեանց։ Հանդիսականները բաւականաչափ էին, որոնց վրա պ. պ. դերասանները զօսով ծախեցին ծանակներ, մէկին սափրվով, միւսին ամաչցնելով, բայց վերջը հանդիսականները չը փոչմանեցին և հայերէն ներկայացումն դերասանցեցին վրացերէնից և խնդրեցին որ դարձեալ ներկայացումն տան, բայց տարաբաղդաբար դերասանները ուստիչներ լինելով չատ պատ էին գնալու իրանց տեղերը, և այսպէս չը կարողացան գօրեցիների ցանկութիւնը կատարել և խոստացան միւս տարի տալ մի քանի հայերէն ներկայացումներ։

Բայց պէտք է ասած որ գօրեցիների մէջ այսպիսի օգտակար բաների մէջ հոգնդ չը կայ, չեն սիրում գնալ թատրոն. սրանք ուրախութեամբ տան մանէթներով կը մտնեն քէֆի և թղթախաղի մէջ, իսկ մի բուբլ կամ 50 կոպէկ չեն տայ այսպիսի օգտակար բաների համար։

Գօրեցիները սեփական բեմ ունեն բոլոշոդա կոչված այգիում, որ գտնվում է Քուրի ափը, և ով որ այնտեղ ներկայացնում է պէտք է քըրէչ տայ 10—15 բ., բայց արդեօք այդ փողերը գործ են դնում բեմաշինութեան համար, դա մի հարց է։ Որ տեղից է երևում թէ գործ են դնում. վարագոյրն ու չպալիէրները պատռած, նստարանները կոտրած, դիկորացիաներ չը կան, գործողութիւնների ժամանակ ոչինչ փոփոխութիւն չէ տրվում բեմին։ Իսկ այդին յինում են, փողը շատ է մնում քաղաքից, չինած ոչինչ չէ երևում, անված են ծառեր և մի քանի ծաղիկներ, իսկ ման գալու տեղը.... խորհուրդ ենք տալիս գումայի անդամներին, որոնց ձեռքն է գնում բեմի քրէչը այդ փողը գործ դնեն բեմի համար, գարդարեն այնպէս, ինչպէս հարկն է։

Գօրեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա, 28 օգոստոսի

Մոսկվայի համալսարանի մի քանի ուսանողներս կարդացինք «Մշակ» ազգաչաշ լրագրիդ 153 համարում պ. Աւէքսանդր Նաջարեանցի Կիսլովոդսկից ուղարկած նամակը, որի մէջ պարոնը յայտնում է այն լուրը, որ Մանկունի եպիսկոպոսի պատուին մէկ արձան են կառուցանում։ Այդպէս չատ ուրախալի է այս երևոյթը, որ հայերս սկսում ենք սովորել յարգել այն մարդկանց յիշատակը, անմահացնել այն անձանց անունները, որոնք իրենց անգուլ աշխատութեամբ գիչեր, ցերեկ քրտինք թափելով պաշտպանում են հերոսաբար ազգի կենսական շահերը, մղում են ազգը յառաջդիմութեան ճանապարհի վրա, լուսաւորելով նրան և ժամանակակից գաղափարներ նրա մէջ տարածելով. այսպիսի անձինք արժանի են կատարեալ համակրութեան։ Սրանց մէջ անկասկած առաջին տեղը բռնում է հայերիս մէջ «օրուան հերոս գերապատիւ Մանկունի սրբազանը, այս Ջնաշխարհիկ, ամենայն առաքինութեամբ լի, միանգամայն կատարելութեան տիպար դարձած, բայց զժբաղդաբար մինչև այժմ անգոհունակ հայ ժողովրդից և նրա խնամակալներից. մանաւանդ ուսանողութիւնից, մուսացված մեծարելի հոգևորականը, որը համարեա կիսեռք է դարձած այն չարչարանքներից, որ նա կրում է, հայ ազգին հոգևոր կերակուր մատակարարելով, նրա հոգևոր չարների վրա որ ու գիչեր մտածելով, նրա անթիւ թշուառութիւնները կարեկցաբար ամբարելով և սասալի վերքերին սպեղանիներ դնելով. Այո՛, սրբազանը մուսացված է իր ժամանակակիցներից։ Ով չէ յիշում այն քաջը հայրական ընդունելութիւնը, որ այս անմման հովիւը ցոյց տուեց Ալաչկերտցի գաղթականներին. ով կը մոռանայ այն բարի և ազգասէր նպատակները, որոնցով դիմաւորված գնաց մեր սրբազան հայրը Կ. Պոլիս մեր միակ—պահապան հրեշտակի—Ներսէս սրբազան պատրիարքի հետ խորհրդակցելու։ Վերջապէս ում յիշողութիւնից է դուրս եկել այն խելացի մտացածին կարգադրութիւնները, որով օրական հարիւրաւոր ուսումնական, ազգի սիրտը վառված ժողովրդի չաներին ջատագով սիրացուներ քահանաներ են ձեռնադրվում ժողովրդին հոգևոր հայ հայեցողներ նպատակաչ, դեռ ես թողնում եմ ուրիշ յարգարժան գործերը յիշատակել։ Այս ամենը իրաւունք է տալիս, այո, մեր սրբազան հայրիկին արժանաւոր յարգը և պատիւը սպասել հայ ազգից, ուստի և մենք՝ ուսանողներս մեծ պատիւ համարելով մեզ մասնակցել այդ մեծ ընդհանուր, ազգային տօնին, որը կը լինի արձանի բացման հանդէսը, ուղարկում ենք խմբագրութեանդ մեզանում հանգանակութեամբ ըստ բարի կամաց և ցանկութեան հաւաքած 5 կոպէկը, որը, յուսալ ենք, չէք դանայ ուղարկել ուր հարկն է։ Յիշատակ սրբազան հոր մերոյ օրհնեալ և անմոռ եղիցի։

Խնդրում ենք, խմբագիր տէր, տպագրել այս մեր երկտող յոդուածը և խրախոյս հայ ժողովրդի, որ այսպէս պատրաստակամութեամբ սկսում է անմահացնել իր մեծ բարերարների յիշատակը։

Զորս ուսանողներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻ մէջ հրատարակվող «Պսակ» լրագիրը յայտնում է թէ եկող թուականից հրատարակվելու է չարաթը երկու անգամ։

—

Ներկայ թուից կը սկսի հրատարակվել Երևանում, քաղաքային բժիշկ Լեոն Տիգրանեանի խմբագրութեամբ «Առողջապահական թերթ» մի ամսեայ հանդէս հետևեալ պրոգրամայով. I. Պետական կարգադրութիւններ ժողովրդի առողջութեան վերաբերութեամբ։ II. Առողջապահական յոդուածներ աշխարհի ոճով. ժողովրդի առողջապահական պայմանները. բժշկական արհեստը ժողովրդի մէջ. բժշկականութիւնը ժողովրդացրած. III. Բժշկական մատենախօսութիւն. IV. Խառն լուրեր։ V. Յայտարարութիւններ։ Հանդիսի տարեկան գինը 3 բուբլ է, կանխիկ վճարելու։ Գրվել կարելի է Երևանում, խմբագրատան մէջ, իսկ օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հետևեալ հասցէով։ Эривань, въ редакцію журнала «Гигіеническій Листокъ»

—

«Պսակ» լրագրում կարդում ենք հետևեալը։ «Մեզ լուր են հաղորդում, որ Գէորգեան ճեմարանի ապագայ վերատեսուչ պ. Արշակ Նանապետեան, բացի 5000 բուբլ տարեկան ռոճիկից, ստանալու է նոյնպէս 700 բուբլ ճանապարհածախս։ Ինչ մարդասէր վարձունք դէպի ազգից կոպէկներով ժողոված դուսարները։»

—

Հետևեալը կարդում ենք գարձեալ «Պսակի» մէջ. «Լսում ենք որ տեղատեղերից Գէորգեան ճեմարանում ի թիւս այլոց, համաձայնվել են ուսուցչական պաշտօններ վարել պ. Սեդրակ Մանգինեանց 4000 բուբլ ռոճկով, Փիլիպպա Վարդանեան 3000 բ. ռոճկով, Կարապետ Կոստանեանց 3000 բուբլ ռոճկով, ի հարկէ, բացի իրանց ճանապարհածախսերից։»

—

Վիեննայում հրատարակվող «Ասորեալ դ'Օրիան» յայտնում է իր վերջին 36 համարում որ թագաւորութիւն է ստացել ազատ կերպով մտնել Ռուսաստանը, ի հարկէ ենթարկվելով նոյն պայմաններին, որոնց ենթարկվում է ամեն արաբատանեան լրագիր. այն է ցենզուրայի քննութիւնը։

—

Մեզ գրում են Բօրչալուի գաւառի Զանգիբէկի գիւղից, որ օգոստոսի 20-ին այդ գիւղի մի 7 տարեկան երեխայ կորել է անտառում. Մինչև այժմ չեն կարողանում գտնել կորած մանուկը։ Նրա հայրն ու մայրը վերջին ծայր յուսահատութեան մէջ են և ամբողջ օր թափառում են շրջակայ անտառներում։ Ասիկանութիւնը անգոր է խուզարկութիւններ անել և գտնել կորած երեխային։ Ի հարկէ նախապաշարված ժողովուրդը սկսում է առակներ հնարել և պատմել, հաւատացնելով որ երեխաներն են երեխային տարել։ Ինչ զժբաղդութիւն և պատահի,—տգէտ ժողովուրդը ամեն բանի մէջ պատրաստ է երեխաներին մեղադրել։

—

Ֆադեևի գիրքը «Письма о современномъ положеніи Россіи», որին թոյլ տրվեցաւ մտնել Ռուսաստանի մէջ, այնքան տարածվեցաւ, որ այժմ, ինչպէս հաղորդում են լրագիրները, նորից հրատարակվեցաւ երկրորդ ապագրութեամբ։

—

Լսում ենք որ մի պարոն դիտաւորութիւն ունի թայլուութիւն խնդրել կառավարութենից ՇՈՒՇՈՒՆ մէջ մի հայերէն տնտագիր հրատարակելու։

—

ՔՈՒԹԱՆԻՍՈՒՄ սկսեց հրատարակվել մի վրացերէն նոր լրագիր «Շրօմա» (Աշխատանք) անունով։ Դա չաբաթներով է և հրատարակվում է «Մշակի» գնդրով։ Մենք ստացանք վրաց նոր լրագրի առաջին համարը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՀԱՅՐԵՆԻՔ“ ԼՐԱԳՐԻ ՅՕԳՈՒԱԾԸ

—

Ինչպէս յառաջագոյն կարդացած էինք լրագրաց մէջ պ. Գրիգոր Նիկոդոսեանի մի քանի հաշուական դիտողութիւններն Մասցեայ ընկերութեանց վերաբերմամբ, նոյնպէս և այժմ կը կարդամք գարձեալ լրագրաց մէջ ընկերութեանց նախորդ Յ՚ՇՐԷՆ ժողովոյ մի պատասխանագիրն՝ որը հերքում պ. Նիկոդոսեանի դիտողութեանց։

Խնդիր մը՝ որ կը վերաբերի մի ոյնպիսի կէտի, որոյ մասին լուռ կամ անտարբեր